

Գրանցված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարությունում
«28» մարտի 2017 թվական
Պետական գրանցման համար 1111734
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարար

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«15» մարտի 2017 թվական

N 96-Ն

ք. Ստեփանակերտ

**ՄԻ ՇԱՐՔ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ, ԴՐԱՆՑ
ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ
ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» ^{*1)} օրենքի 15-րդ, «Շահութահարկի մասին» ^{*1)} օրենքի 69-րդ, «Եկամտային հարկի մասին» ^{*1)} օրենքի 26-րդ, «Ավելացված արժեքի հարկի մասին» ^{*1)} օրենքի 45-րդ, «Առևտրի հարկի մասին» ^{*1)} օրենքի 16-րդ, «Հաստատագրված վճարների մասին» ^{*1)} օրենքի 101-րդ հոդվածները և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ^{*1)} օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել՝

1) հաշվարկված ու վճարված հարկերի և այլ պարտադիր վճարների վերաբերյալ հաշվետվության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) հարկ վճարողի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) ըստ գործունեության իրականացման վայրերի ապրանքանյութական արժեքների շարժի վերաբերյալ հաշվետվության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) *Արցախի^{*1)} Հանրապետությունում գրանցված հարկ վճարողների կողմից Արցախի^{*1)} Հանրապետության տարածքում առաքված (տրամադրված) պատրաստի արտադրանքի կամ ապրանքների համար դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի վերաբերյալ տեղեկանքի ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 4 հավելվածի.*

5) դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերաբերյալ տեղեկանքի ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 5 հավելվածի:

2. Սահմանել, որ սույն *հրամանի 1-ին կետի 1-4-րդ ենթակետերով հաստատված հաշվետվությունները և տեղեկանքը^{*1)}* յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացվում մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, *իսկ 5-րդ ենթակետով հաստատված տեղեկանքը՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ը ներառյալ^{*1)}*:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ս. ԹԵՎՈՍՅԱՆ

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՈՒ ՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. Փաստաթղթի հերթական համարը	(լրացվում է հարկային մարմնի կողմից)							
2. Հարկ վճարողի հաշվառման համարը								
3. Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը								
4. Գտնվելու վայրը								
5. Հաշվետու ժամանակաշրջանը	Տարի					Եռամսյակ		Կիսամյակ
Չափի միավորը						Հազար դրամ		

Հ/Հ	Հարկատեսակը (վճարատեսակը)	Ծածկագիրը	Տարեսկզբի մնացորդը	Հաշվարկված է տարվա սկզբից աճողական կարգով		Վճարված է տարվա սկզբից աճողական կարգով		Տարեվերջի մնացորդը
				ընթացիկ	ստուգման ակտով	ընթացիկ	ստուգման ակտով	
6.	Ավելացված արժեքի հարկ	680						
7.	Ալկոհոլային հարկ	690						
8.	Շահութահարկ	700						
9.	Եկամտային հարկ	705						
10.	Հաստատագրված վճարներ	740						
11.	Առևտրի հարկ	740-ա						
12.	Պետական տուրք	760						
13.	Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումներ (մասհանումներ)	770-ա						
14.	Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	770-բ						
15.	Ռոյալթի	790-բ						
16.	Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներ	790-ա						
17.	Շահաբաժին	000						
18.	Եկամտահարկ	710						
19.	Գործատուների պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	810						
20.	Անհատ ձեռնարկատերերի պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	810-ա						
21.	Տույժեր	780						
22.	Տուգանքներ	790						
Ընդամենը		800						

Կազմակերպության տնօրեն
 (անհատ ձեռնարկատեր)

 (ստորագրությունը)

 (անունը, ազգանունը)

Հաշվապահ

 (ստորագրությունը)

 (անունը, ազգանունը)

Կ.Տ.

Հարկային մարմին առձեռն ներկայացվելու դեպքում, հաշվետվությունը լրացվում է երկու օրինակից: Հարկային մարմնի կողմից գրանցվելուց հետո մեկ օրինակը հանձնվում է հարկ վճարողին:

ԿԱՐԳ
ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՈՒ ՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ

1. 1-ին տողում հարկային մարմնի կողմից լրացվում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը:
2. 2-րդ տողում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (<ՎՀՀ>):
3. 3-րդ տողում լրացվում է իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը:
4. 4-րդ տողում լրացվում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գտնվելու վայրը:
5. 5-րդ տողում լրացվում է այն հաշվետու ժամանակաշրջանը, որի համար ներկայացվում է հաշվետվությունը:
6. «Տարեսկզբի մնացորդը» սյունակում լրացվում է հաշվետու տարվա սկզբին հարկատեսակի (վճարատեսակի) մնացորդը (գերավճարը լրացվում է «-» նշանով):
7. «Հաշվարկված է տարվա սկզբից աճողական կարգով» սյունակի «ընթացիկ» մասում լրացվում է տվյալ եռամսյակի, կիսամյակի, ինն ամսվա կամ տարվա համար հաշվարկված հարկատեսակը (վճարատեսակը), իսկ «ստուգման ակտով» մասում՝ եռամսյակի, կիսամյակի, ինն ամսվա կամ տարվա ընթացքում ստուգման ակտով հաշվարկված գումարը:
8. «Վճարված է տարվա սկզբից աճողական կարգով» սյունակի «ընթացիկ» մասում լրացվում է տվյալ եռամսյակի, կիսամյակի, ինն ամսվա կամ տարվա ընթացքում վճարված հարկատեսակը (վճարատեսակը), իսկ «ստուգման ակտով» մասում՝ ստուգման ակտով հաշվարկված հարկատեսակի (վճարատեսակի)՝ եռամսյակի, կիսամյակի, ինն ամսվա կամ տարվա ընթացքում վճարված գումարը:
9. «Տարեվերջի մնացորդը» սյունակում լրացվում է «Տարեսկզբի մնացորդը» և «Հաշվարկված է տարվա սկզբից աճողական կարգով» սյունակների հանրագումարի և «Վճարված է տարվա սկզբից աճողական կարգով» սյունակի տարբերությունը (գերավճարը լրացվում է «-» նշանով):
10. «Ընդամենը» տողում լրացվում է սյունակներում լրացված տողերի հանրագումարը:

ԼԵՈՒԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ձև

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ԻՐԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԴՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. Փաստաթղթի հերթական համարը	(լրացվում է հարկային մարմնի կողմից)							
2. Հարկ վճարողի հաշվառման համարը								
3. Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը								
4. Գտնվելու վայրը								
5. Հաշվետու ժամանակաշրջանը	Տարի					Եռամսյակ		Կիսամյակ
Չափի միավորը						Հազար դրամ		

Հ/Հ	Գործունեության ոլորտը (տեսակը)	Ծածկագիրը	Իրացման շրջանառությունը				Հաշվարկված հարկերը և այլ պարտադիր վճարները տարվա սկզբից աճողական կարգով
			հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում		տարվա սկզբից աճողական կարգով		
			առանց անուղղակի հարկերի	անուղղակի հարկերով	առանց անուղղակի հարկերի	անուղղակի հարկերով	
6.	Հանքարդյունահանման գործունեություն	1					
7.	Արտադրության ոլորտ	x	x	x	x	x	x
7.1.	Ապրանքների արտադրություն, բացառությամբ 7.2-7.6-րդ տողերում նշվածների	1.1					
7.2.	Հացաբուլկեղենի արտադրություն	1.2					
7.3.	Սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքների արտադրություն	1.3					
7.4.	Թանկարժեք մետաղների և քարերի արտադրություն	1.4					
7.5.	Գյուղատնտեսական մթերքի արտադրություն	1.5					
7.6.	Ալկոհոլային խմիչքների արտադրություն	1.6					
8.	Շինարարության ոլորտ	2					
9.	Առևտրի ոլորտ	x	x	x	x	x	x
9.1.	Հաստատագրված վճարներով հարկման ռեժիմով առևտուր, բացառությամբ 9.6-րդ տողում նշվածի	3.1					
9.2.	Առևտրի հարկով հարկման ռեժիմով առևտուր	3.2					
9.3.	Ընդհանուր հարկման ռեժիմով	3.3					

	առևտուր						
9.4.	Դեղերի և բժշկական նշանակության այլ ապրանքների առևտուր	3.4					
9.5.	Բենզինի և դիզելային վառելիքի առևտուր	3.5					
9.6.	Ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն	3.6					
10.	Տրանսպորտի ոլորտ	4					
11.	Էներգետիկայի ոլորտ	5					
12.	Հեռահաղորդակցության ոլորտ	6					
13.	Սպասարկման ոլորտ	x	x	x	x	x	x
13.1.	Սպասարկման ծառայություններ, բացառությամբ 13.2-րդ և 13.3-րդ տողերում նշվածների	7.1					
13.2.	Հանրային սննդի կազմակերպում	7.2					
13.3.	Հյուրանոցային ծառայությունների մատուցում	7.3					
14.	Ֆինանսական ծառայությունների ոլորտ	8.5					
15.	Պետական հատվածում գործունեություն (պետական կառավարչական հիմնարկների և համայնքների ղեկավարների աշխատակազմերի գործունեություն)	9.1	x	x	x	x	
16.	Կրթության ոլորտ	9.2					
17.	Առողջապահության ոլորտ	9.3					
18.	Այլ ոլորտներ	10					
Ընդամենը							
19.	Ենթակապալային պայմանագրերով աշխատանքների կատարում, ապրանքների մատակարարում և ծառայությունների մատուցում	11					x
Ընդհանուրը							

*)

Կազմակերպության տնօրեն
(անհատ ձեռնարկատեր)

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

Հաշվապահ

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

Կ.Տ.

Հարկային մարմին առձեռն ներկայացվելու դեպքում, հաշվեպնդությունը լրացվում է երկու օրինակից: Հարկային մարմնի կողմից գրանցվելուց հետո մեկ օրինակը հանձնվում է հարկ վճարողին:

ԿԱՐԳ
ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ԻՐԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ

1. 1-ին տողում հարկային մարմնի կողմից լրացվում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը:
2. 2-րդ տողում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (<ՎՀՀ>):
3. 3-րդ տողում լրացվում է իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը:
4. 4-րդ տողում լրացվում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գտնվելու վայրը:
5. 5-րդ տողում լրացվում է այն հաշվետու ժամանակաշրջանը, որի համար ներկայացվում է հաշվետվությունը:
6. 6-րդ տողը լրացնում են հանքարդյունահանման գործունեություն իրականացնող հարկ վճարողները:
7. 7.1-ին տողը լրացնում են 7.2-7.6-րդ տողերում չնշված ապրանքների արտադրություն իրականացնող հարկ վճարողները:
8. 7.2-րդ տողը լրացնում են հացաբուլկեղենի արտադրություն իրականացնող հարկ վճարողները:
9. 7.3-րդ տողը լրացնում են սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքների արտադրություն իրականացնող հարկ վճարողները:
10. 7.4-րդ տողը լրացնում են թանկարժեք մետաղների և քարերի, ինչպես նաև դրանցից իրերի արտադրություն իրականացնող հարկ վճարողները:
11. 7.5-րդ տողը լրացնում են գյուղատնտեսական մթերքի արտադրություն իրականացնող հարկ վճարողները:
12. 7.6-րդ տողը լրացնում են ալկոհոլային խմիչքների արտադրություն իրականացնող հարկ վճարողները:
13. 8-րդ տողը լրացնում են շինարարության ոլորտում գործունեություն իրականացնող հարկ վճարողները (այդ թվում՝ նաև քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն իրականացնողները)՝ առանց ենթակապալային պայմանագրերով կատարված աշխատանքների:
14. 9.1-ին տողը լրացնում են հաստատագրված վճարներով հարկման ռեժիմով առևտուր իրականացնող հարկ վճարողները, բացառությամբ 9.6-րդ տողում նշվածի:
15. 9.2-րդ տողը լրացնում են առևտրի հարկով հարկման ռեժիմով առևտուր իրականացնող հարկ վճարողները:
16. 9.3-րդ տողը լրացնում են ընդհանուր հարկման ռեժիմով առևտուր իրականացնող հարկ վճարողները:
17. 9.4-րդ տողը լրացնում են դեղերի և բժշկական նշանակության այլ ապրանքների առևտուր իրականացնող հարկ վճարողները:
18. 9.5-րդ տողը լրացնում են բենզինի և դիզելային վառելիքի առևտուր իրականացնող հարկ վճարողները:
19. 9.6-րդ տողը լրացնում են ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնող հարկ վճարողները:

20. 10-րդ տողը լրացնում են տրանսպորտի ոլորտում գործունեություն իրականացնող հարկ վճարողները:

21. 11-րդ տողը լրացնում են էներգետիկայի ոլորտում գործունեություն իրականացնող հարկ վճարողները:

22. 12-րդ տողը լրացնում են հեռահաղորդակցության ոլորտում գործունեություն իրականացնող հարկ վճարողները:

23. 13.1-ին տողը լրացնում են սպասարկման ծառայությունների մատուցման գործունեություն (կոշիկի, կենցաղային իրերի նորոգում, անշարժ գույքի հետ կապված ծառայությունների մատուցում, համակարգչային խաղերի, գեղեցկության սրահների, ավտոտեխսպասարկման կետերի, լուսանկարչական լաբորատորիաների, թատերական, համերգային գործունեություններ և այլն) իրականացնող հարկ վճարողները, բացառությամբ 13.2-րդ և 13.3-րդ տողերում նշվածների:

24. 13.2-րդ տողը լրացնում են հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող հարկ վճարողները:

25. 13.3-րդ տողը լրացնում են հյուրանոցային ծառայությունների մատուցման գործունեություն իրականացնող հարկ վճարողները:

26. 14-րդ տողը լրացնում են ֆինանսական ծառայությունների ոլորտում գործունեություն իրականացնող հարկ վճարողները:

27. 15-րդ տողը լրացնում են պետական հատվածի կազմակերպությունները (պետական կառավարչական հիմնարկները և համայնքների ղեկավարների աշխատակազմերը), բացառությամբ 16-րդ տողում նշված ոլորտում գործունեություն իրականացնող պետական կառավարչական հիմնարկների:

28. 16-րդ տողը լրացնում են կրթության ոլորտում գործունեություն իրականացնող հարկ վճարողները:

29. 17-րդ տողը լրացնում են առողջապահության ոլորտում գործունեություն իրականացնող հարկ վճարողները:

30. 18-րդ տողը լրացնում են արհեստակցական կազմակերպությունները, հասարակական միավորումները և հիմնադրամները:

31. 19-րդ տողը լրացնում են այն հարկ վճարողները, ովքեր կնքել են ենթակապալային պայմանագրեր՝ նշելով ենթակապալառուի կողմից կապալային պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների, մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների իրացման շրջանառությունները:

32. «Հաշվարկված հարկերը և այլ պարտադիր վճարները տարվա սկզբից աճողական կարգով» սյունակում լրացվում են ըստ գործունեության տեսակների հարկ վճարողի կողմից հաշվարկված շահութահարկի, եկամտային հարկի, ակցիզային հարկի, ավելացված արժեքի հարկի, հաստատագրված վճարների, առևտրի հարկի, ^{*1)} բնապահպանական և բնօգտագործման վճարների (այդ թվում՝ ռոյալթիի) և հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների գումարները:

Մեկից ավելի գործունեության տեսակներով զբաղվելու դեպքերում՝

1) կառավարման ապարատի աշխատավարձից և դրան հավասարեցված այլ վճարումներից պահված եկամտային հարկը ներկայացվում է համամասնական կարգով.

2) ավելացված արժեքի հարկի և շահութահարկի (անհատ ձեռնարկատիրոջ տարեկան եկամուտներից հաշվարկվող եկամտային հարկի) գումարները

ներկայացվում են ընդհանուր գործունեության մեջ տվյալ գործունեության տեսակի տեսակարար կշռով:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ձև

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԵՐԻ ԱՊՐԱՆՔԱՆՅՈՒԹԱԿԱՆ
ԱՐԺԵՔՆԵՐԻ ՇԱՐԺԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. Փաստաթղթի հերթական համարը	_____ (լրացվում է հարկային մարմնի կողմից)									
2. Հարկ վճարողի հաշվառման համարը										
3. Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը										
4. Գործունեության իրականացման վայրի (կետի) հասցեն										
5. Հաշվետու ժամանակաշրջանը	Տարի					Ամիս			Եռամսյակ	Կիսամյակ
Չափի միավորը					Հազար դրամ					

Հ/Հ	Իրացման համար նախատեսված ապրանքանյութական արժեքների անվանումը	Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	Հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված և (կամ) արտադրված	Իրացման շրջանառությունը		Շեղումները		Ներտնտեսական (ներարտադրական) սպառումը	Ներքին տեղաշարժը	Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում
				կանխիկ վճարմամբ	բանկային փոխանցմամբ (այդ թվում անհատույց)	դրական	բացասական			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
6.	ապրանք									
7.	արտադրանք									

*7)

Կազմակերպության տնօրեն
(անհատ ձեռնարկատեր)

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

Հաշվապահ

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

Կ.Տ.

Հարկային մարմին առձեռն ներկայացվելու դեպքում, հաշվեկրկությունը լրացվում է երկու օրինակից: Հարկային մարմնի կողմից գրանցվելուց հետո մեկ օրինակը հանձնվում է հարկ վճարողին:

ԿԱՐԳ

ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԵՐԻ ԱՊՐԱՆՔԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՇԱՐԺԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ

1. 1-ին տողում հարկային մարմնի կողմից լրացվում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը:

2. 2-րդ տողում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (<ՎՀՀ):

3. 3-րդ տողում լրացվում է իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը:

4. 4-րդ տողում լրացվում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության իրականացման վայրի (կետի) հասցեն:

5. 5-րդ տողում լրացվում է այն հաշվետու ժամանակաշրջանը, որի համար ներկայացվում է հաշվետվությունը:

5.1. 6-րդ և 7-րդ տողերում լրացվում են առևտրական կետերի (խանութներ, կրպակներ, տաղավարներ), վրանների, շարժական կետերի, շուկաների վաճառատեղերի և ապրանքների ցուցադրման ու անմիջական վաճառքի իրականացման այլ վայրերի (կետերի) միջոցով (այդ թվում՝ կոմիսիոն հիմունքներով) իրացվող համապատասխանաբար ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող ապրանքները և սեփական արտադրության արտադրանքը:^{*1)}

6. 3-րդ սյունակում լրացվում է ապրանքանյութական արժեքների մնացորդը՝ իրացման գներով, հաշվետու ժամանակաշրջանի սկզբին:

7. 4-րդ սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված և (կամ) արտադրված ապրանքանյութական արժեքների արժեքը՝ իրացման գներով:

8. 5-րդ և 6-րդ սյունակներում լրացվում են համապատասխանաբար՝ կանխիկ վճարմամբ և բանկային փոխանցմամբ (այդ թվում՝ անհատույց) իրացման շրջանառություններ:

9. 7-րդ և 8-րդ սյունակները լրացվում են ապրանքանյութական արժեքների գումարային և քանակական շեղումների (դրական կամ բացասական) դեպքում (գնային փոփոխություններ, պատահական կորուստներ և այլն):

10. 9-րդ սյունակում լրացվում է ապրանքանյութական արժեքների ներտնտեսական (ներարտադրական) սպառումը^{*2)}:

11. 10-րդ սյունակում լրացվում է ապրանքանյութական արժեքների շարժը հարկ վճարողի գործունեության իրականացման տարբեր վայրերի միջև:

Ներքին տեղաշարժի ենթարկվող ապրանքանյութական արժեքների ելքի դեպքում հաշվետվության 10-րդ սյունակում գումարը լրացվում է «-» նշանով:

12. 11-րդ սյունակում լրացվում է 3-րդ, 4-րդ, 7-րդ և 10-րդ սյունակներում նշված թվերի հանրագումարի և 5-րդ, 6-րդ, 8-րդ և 9-րդ սյունակներում նշված թվերի տարբերությունը (սյունակ [11] = սյունակ [3] + սյունակ [4] - սյունակ [5] - սյունակ [6] + սյունակ [7] - սյունակ [8] - սյունակ [9] ± սյունակ [10]):

Ձև

ՏԵՂԵԿԱՆՔ

ԱՐՑԱԽԻ^{*1)} ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ԱՐՑԱԽԻ^{*1)} ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԱՔՎԱԾ (ՏՐԱՄԱԴՐՎԱԾ)
ՊԱՏՐԱՍՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԿԱՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՈՒՐՍ ԳՐՎԱԾ
ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Փաստաթղթի հերթական համարը	_____ (լրացվում է հարկային մարմնի կողմից)									
2. Հարկ վճարողի հաշվառման համարը										
3. Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը										
4. Գտնվելու վայրը										
5. Հաշվետու ժամանակաշրջանը	Տարի					Ամիս			Եռամսյակ	Կիսամյակ
Չափի միավորը					Հազար դրամ					

Հ/Հ	Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը	Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	Հաշվարկային փաստաթղթի համարը	Հաշվարկային փաստաթղթի ամսաթիվը	Գումարը ^{*1)}	Նշումները
1	2	3	4	5	6	7
Ընդամենը						x

Կազմակերպության տնօրեն
 (անհատ ձեռնարկատեր)

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

Հաշվապահ

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

Կ.Տ.

Հարկային մարմին առձեռն ներկայացվելու դեպքում, տեղեկանքը լրացվում է երկու օրինակից: Հարկային մարմնի կողմից գրանցվելուց հետո մեկ օրինակը հանձնվում է հարկ վճարողին:

ԿԱՐԳ

ԱՐՑԱԽԻ^{*1)} ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՑԱԽԻ^{*1)} ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԱՔՎԱԾ (ՏՐԱՄԱԴՐՎԱԾ) ՊԱՏՐԱՍՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԿԱՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՈՒՐՍ ԳՐՎԱԾ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔԻ ԼՐԱՑՄԱՆ

1. 1-ին տողում հարկային մարմնի կողմից լրացվում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը:

2. 2-րդ տողում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (<ՎՀՀ):

3. 3-րդ տողում լրացվում է իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը:

4. 4-րդ տողում լրացվում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գտնվելու վայրը:

5. 5-րդ տողում լրացվում է այն հաշվետու ժամանակաշրջանը, որի համար ներկայացվում է տեղեկանքը:

6. 1-ին սյունակում լրացվում է տողի հերթական համարը, 2-րդ սյունակում՝ այն իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, որին հաշվետու ժամանակաշրջանում դուրս է գրվել հաշվարկային փաստաթուղթ, իսկ 3-րդ սյունակում՝ վերջինիս հարկ վճարողի հաշվառման համարը (<ՎՀՀ):

7. 4-րդ սյունակում լրացվում է դուրս գրված հաշվարկային փաստաթղթի համարը, 5-րդ սյունակում՝ հաշվարկային փաստաթղթի դուրսգրման ամսաթիվը, իսկ 6-րդ սյունակում՝ դուրս գրված հաշվարկային փաստաթղթում նշված գումարը^{*1)}:

8. 7-րդ սյունակը լրացվում է այն դեպքում, երբ գործարքի իրականացման ամսաթիվն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանը տարբերվում է հաշվարկային փաստաթղթի դուրսգրման հաշվետու ժամանակաշրջանից, որի դեպքում սյունակում լրացվում է գործարքի իրականացման ամսաթիվն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանը:

9. *Տեղեկանքում չեն ներառվում հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները:^{*1)}*

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ձև

**ՏԵՂԵԿԱՆՔ
 ԴԵՐԻՏՈՐԱԿԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. Փաստաթղթի հերթական համարը	_____					
	(լրացվում է հարկային մարմնի կողմից)					
2. Հարկ վճարողի հաշվառման համարը						
3. Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը						
4. Գտնվելու վայրը						
5. Հաշվետու ժամանակաշրջանը	Տարի					*)
			Չափի միավորը		Հազար դրամ	

Բաժին 1. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի նկատմամբ առկա դեբիտորական և (կամ) կրեդիտորական պարտքի գումարը

Հ/Հ	Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը	Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	Պարտքի գումարը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ		Պարտքի առաջացման ժամկետը
			դեբիտորական	կրեդիտորական	
1	2	3	4	5	6
Ընդամենը					x

Բաժին 2. Բնակչության նկատմամբ առկա դեբիտորական և (կամ) կրեդիտորական պարտքի գումարը

Պարտքի գումարը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ	
դեբիտորական	կրեդիտորական

Կազմակերպության տնօրեն
 (անհատ ձեռնարկատեր)

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

Հաշվապահ

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

Կ.Տ.

Հարկային մարմին առձեռն ներկայացվելու դեպքում, տեղեկանքը լրացվում է երկու օրինակից: Հարկային մարմնի կողմից գրանցվելուց հետո մեկ օրինակը հանձնվում է հարկ վճարողին:

ԿԱՐԳ
ԴԵՔԻՏՈՐԱԿԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔԻ
ԼՐԱՑՄԱՆ

1. 1-ին տողում հարկային մարմնի կողմից լրացվում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը:

2. 2-րդ տողում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (<ՎՀՀ>):

3. 3-րդ տողում լրացվում է իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը:

4. 4-րդ տողում լրացվում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գտնվելու վայրը:

5. 5-րդ տողում լրացվում է այն հաշվետու տարին^{*)}, որի համար ներկայացվում է տեղեկանքը:

6. 1-ին բաժնի 1-ին սյունակում լրացվում է տողի հերթական համարը, 2-րդ սյունակում՝ դեբիտոր և (կամ) կրեդիտոր իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, իսկ 3-րդ սյունակում՝ վերջինիս հարկ վճարողի հաշվառման համարը (<ՎՀՀ>):

7. 1-ին բաժնի 4-րդ և 5-րդ սյունակներում համապատասխանաբար լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ առկա դեբիտորական և կրեդիտորական պարտքի գումարը:

8. 1-ին բաժնի 6-րդ սյունակում լրացվում է դեբիտորական կամ կրեդիտորական պարտքի առաջացման ժամկետը:

9. 2-րդ բաժնում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ բնակչության նկատմամբ առկա դեբիտորական և (կամ) կրեդիտորական պարտքի գումարը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

^{*)} ԱՀ ՊԵԿ նախագահի 23.03.2022թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարի 2017 թվականի մարտի 15-ի N 96-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 50-Ն հրամանի խմբագրությամբ